Այսպիսի դէպքերը պատահում էին համարեա միշտ, որովհետեւ - հարկերը վերջ ու սահման չունէին: Ամէն բանի համար պահանջւում էր, թէ ցանքի համար, թէ անասունների համար եւ թէ մեր ընտանիքը կազմող հոգիների համար: Հաշիւ չկար. հաշիւը կախուած էր պահանջողի կամքից միայն: Վերջապէս հարկերը կարող էին ծագել հազար ու մէկ հանգամանքներից, եւ այնքան զանազան միմեանցից, որ շատերի անունները մոռացել եմ: Որտեղի՞ց պէտք էր վճարել: — Պէտք էր տունից մի բան ծախել, մի բան գրաւ դնել: Բայց մեր տանը ոչինչ չէր մնացել. մեր տունը նմանում էր մերկ գերեզմանի: Այդ կարո՞ղ էր հասկանալ ֆերրաշը: Նա ինքն էր ծախել տալիս մեր կովը, մեր եզը եւ մեր գոմէշը, ամենեւին չմտածելով, թէ վաղը մեր արօրը կդադարէ գործելուց եւ մի ամբողջ ընտանիք կը զրկոի ապրուստի միջոցներից:

Հայրս վերջին ժամանակներում բոլորովին թողեց իր հողերի մշակութիւնը, որովհետեւ ստացած արդիւնքը մինչեւ անգամ չէր լրացնում հարկերի վճարը: Բայց այսպիսով նա դարձեալ չազատուեցաւ ֆերրաշներից, նրանց այցելութիւնները դարձեալ շարունակւում էին:

Ինչո՞վ պէտք էր ապրել: — Մնում էր մի բան, որ սոված չմեռնենք՝ միշտ պա՛ռտք եւ պա՛ռտք անել... Բայց որքան ծա՜նր էին տոկոսները... ես այն ժամանակ երեխայ էի, ի հարկէ, հաշիւներ չէի կարող հասկանալ, բայց դեռ չեմ մոռացել մեր անիրաւ վաշխառոի վայրենի դէմքը: Նրան կոչում էին Հաջի-Բաբայ. դա մի հարուստ մահմեդական էր, բայց հոգէառ հրեշտակը ձեզ օրինակ, երբ յայտնւում էր տոկոսները հաւաքելու: Նա գրել-կարդալ չէր իմանում եւ ոչ տոած փողերի համար պարտամուրհակ էր պահանջում: Նրա պարտամուրհակը իր խղճմտանքն էր, իսկ ամսաթիւը կամ տարեթիւը հաշւում էր եղանակների փոփոխութեան վրայ: Նա մի տոպրակի մէջ իր հետ ման էր ածում փայտի զանազան կտորներ, երկայն եւ կարճ, բարակ ձողերի նման, որոնց վրայ նշաններ էին արած գոյնզգոյն դերձաններով, — դրանք նրա հաշոամատեաններն էին: Ձողերի վրայ կային շատ եւ փոքր թոով խազեր, որ նշանակում էին գումարների որքանութիւնը, իսկ գոյնզգոյն դերձանները պարտականների անուններն էին որոշում:

Հաջի-բաբան գանգատ անելու սովորութիւն չունէր, երբ նրա պարտականներից մէկը իր ժամանակին փող չէր վճարում կամ ուշացնում էր. — նա իր դատաստանը իր ձեռքովն էր անում: Ամենին յայտնի էր Հաջի-Բաբայի ահագին մահակը, որով նա ջարդում էր իր պարտականների ոսկորները: Նա մինչեւ անգամ իր հրամանով բանտարկում էր շատերին եւ ծախել էր տալիս նրա տան կայքը: